'ի միւս պարկէ թուղթ սպիտակ նա լինիցի ազատ երթայ 'ի խաղաղութեան։

ԳԼՈՒԽ ՅԾԴ.

'Ի դատաստանէ ամենայն քաղաքաց 'ի միջի դատաւորաց պարտ է ընտրել ամենայն ամսի այր մի և տալ իշխանութիւն նմայ ժամանակաւ մի ամսաւ յիշխել 'ի վերայ յանկարծակի գանգատաց թէ 'ի այգ և եթէ 'ի գիշերի և Օգնական լինիլ գանկատողի և կալանաւոր առնել փախչողի մինչև Օրն դատաստանի մուծանել նմայ 'ի դատաստան։

ԳԼՈՒԽ ՅԾԵ.

Իշխան ամսոյն ունի իշխանութիւն դատել այսոցիկ այսինքն, գանգատ և հայցմունք եթէ լինիցի քանակութեամբ մինչև քսան դահեկան երծաթի, և փոքրիկ հարկանողք 'ի արբեցեալ արանց և բնական տղայաբար բարկութեամբ դղրդեալ, եթէ երկուց կողմանէ կամին հաշտել ըստ խնդրոյ հարկանողին ներողութեամբ, և կամ 'ի պատճառէ հայհոյելով միմեանց, և կամ ճարակելոյ անասուն միոյ 'ի արտն միւսին, և կամ հաւն և կամ աղաւնին դրացուն գտեալ 'ի տանն դրկցին, և կամ կողոպտեալ ջուր բաժին այլոց յոռոգանիլ արտն իւր, և կամ խածատել շուն անասնոյ այլոց, և ով ոք սպանեալ շուն այլոց,